ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՌԴ Ստավրոպոլի երկրամասի Պյատիգորսկ քաղաք-առողջարանի և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի միջև

« 14 » հունիսի 2018 թվական քք. Դիլիջան

ՌԴ Ստավրոպոլի երկրամասի Պյատիգորսկ քաղաքի քաղաքապետ Անդրեյ Վալերիի Սկրիպնիկը, որը գործում է Պյատիգորսկ քաղաք-առողջարանի Կանոնադրության հիման վրա,

և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Վովայի Սանթրոյանը, որը գործում է Դիլիջանի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա,

հետագայում անվանվող «կողմեր», հիմնվելով երկկողմ տնտեսական, առևտրատնտեսական և մշակութային կապերի զարգացման, պահպանման և ընդլայնման ու համագործակցության բոլոր ոլորտներում փոխշահավետ հարաբերությունների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման փոխադարձ շահագրգռվածության վրա, էական նշանակություն տալով պետությունների միջև բարեկամության և բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացմանն ու ամրապնդմանը, ղեկավարվելով տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով (Ստրասբուրգ, 15 հոկտեմբերի 1985թ.), պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն համաձայնագիրը ստորագրելու օրվանից կողմերը եղբայրական հարաբերություններ են հաստատում Ռուսաստանի Դաշնության Պյատիգորսկ քաղաք-առողջարան և Հայաստանի Հանրապետության Դիլիջան քաղաքի միջև:

Հոդված 2

Կողմերը կիրականացնեն երկկողմանի փոխադարձ հարգանքի ոգով համագործակցություն՝ բարեկամության, վստահության, , փոխըմբռնման, փոխշահավետ և իրավահավասար գործընկերության սկզբունքներով և ինքնիշխան պետություններում գործող օրենսդրություններին համապատասխան՝ փոխադարձ շահի հիման վրա հետևյալ ուղղություններով.

- տնտեսություն, գործարար և առևտրային կապեր,

- սոցիալ-մշակութային ոլորտ,

- տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքային գործնեության պրակտիկա:

Հոդված 3

Կողմերը կնպաստեն իրենց տարածքում գտնվող ձեռնարկությունների, կազմակերպությունների և հաստատությունների համագործակցության իրականացմանը՝ անկախ կազմակերպչական, իրավական, սեփականության և գերատեսչական ենթակայության ձևերից, նրանց միջև առևտրատնտեսական և տնտեսական ու այլ կապերի հաստատման, պահպանման և ընդլայնման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

Հոդված 4

Կողմերը կնպաստեն համապատասխան տարածքներում գործող համատեղ ներդրումային նախագծերի և ծրագրերի իրագործմանը, տնտեսական գործունեության սուբյեկտների մասնակցությանը, ինչպես նաև կօժանդակեն համատեղ ձեռնարկությունների և արտադրությունների

ստեղծմանն ու գործունեությանը, այդ թվում՝ երրորդ կողմերի ներգրավմամբ:

Կողմերն անհրաժեշտ քայլեր կձեռնարկեն ներդրումների ներգրավման, ներդրումային բարենպաստ պայմանների բարելավման համար:

Հոդված 5

Կողմերը կնպաստեն ստեղծագործական կոլեկտիվների ելույթների փոխանակման, կազմակերպման, իրագործման և ցուցահանդեսների անցկացման ոլորտում, քաղաքների հասարակական միությունների, բնակիչների բարեկամական կապերի զարգացմանը, կաջակցեն համագործակցությանը կրթության և մշակույթի, երիտասարդական քաղաքականության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, զբոսաշրջության և մանկական հանգստի կազմակերպման ոլորտներում:

Հոդված 6

Կողմերը կհամագործեն առողջապահության և բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում, համաչափ աջակցություն կցուցաբերեն բուժկանխարգելիչ հիմնարկների միջև ուղղակի կապերի հաստատման և զարգացման ուղղությամբ՝ համագործակցելու առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և բնակչության սոցիալական պաշտպանության հարցերին:

Հոդված 7

Կողմերը հավաստում են շրջակա բնական միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ոլորտում համագործակցության, արդյունաբերական և կենցաղային թափոնների հավաքման, կուտակման, վերամշակման և օգտահանման ուղղությամբ փորձի փոխանակման իրենց պատրաստակամության մասին:

Հոդված 8

Կողմերը պարտավորվում են քննարկել 2018 թվականից համայնքային կազմավորումների բյուջեների ծախսային մասում սույն համաձայնագրի հիմնադրույթների իրականացման համար դրամական միջոցների ընդգրկման հնարավորությունը:

Հոդված 9

Սույն համաձայնագիրը չի արծարծում կողմերից յուրաքանչյուրի պարտավորությունները իրենց կողմից երրորդ կողմերի հետ կնքված պայմանագրերի (համաձայնագրերի) մասով և խոչընդոտ չի հանդիսանում երրորդ կողմերի առաջ իրենց ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Սույն Համաձայնագրի մեկնաբանության և կիրառության հնարավոր հակասությունները, ինչպես նաև դրա իրագործման ընթացքում ծագած հնարավոր վիճահարույց հարցերը ենթակա են լուծման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև դրա լուծարման պահը:

Հոդված 11

Սույն համաձայնագիրը կարող է լուծարել ցանկացած ժամանակ գրավոր արտահայտված կողմերի պայմանավորվածությամբ:

Սույն համաձայնագիրը կարող է լուծարվել կողմերից մեկի՝ դրա գործողությունը դադարեցնելու մասին գրավոր ծանուցումը մյուս կողմի ստանալու օրվանից 3 ամիս անց:

Կողմերից մեկի՝ դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին գրավոր ծանուցումը

դիվանագիտական ուղիներով, մյուս կողմի ստանալու օրվանից 60 օր անց:

Սույն համաձայնագիրը կարող է լրացվել կամ փոփոխվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Սույն Համաձայնագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե դրանք իրականացվել են գրավոր ձևով և ստորագրված ենք երկու կողմից:

Կատարված է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում « 14 » հունիսի 2018 թվականին չորս բնօրինակով՝ երկուական ռուսերեն և հայերեն:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պյատիգորսկի քաղաքապետ (Ա.Վ.Սկրիպնիկ)

Դիլիջան համայնքի ղեկավար (Ա.Վ.Սանթրոսյան)